

որք և ըստ բարեհաճութեան Արքայան Նախա-
պահի պարգևատրեցան զրենօք:

Իսկ որովհետև երկսեռ Հոգևոր դպրոցք քա-
ղաքիս բաղկանան ի Նախապատրաստականէ, Ա-
ռաջնոյ և յԵրկրորդէ դասարանաց, վասն որոյ
ըստ առաջադրութեան Արքայան Արհույն ենթա-
դասեցաւ ի Հոգարարձութենէ բանալ յայտ՝ ա-
մի և զԵրրորդ դասարան վասն յառաջադէմ
երկսեռ ուսանողաց՝ միայն եթէ ներեսցնն նիւ-
թական միջոցք դպրոցաց ի պէտս պահպանութեան
յիշեալ դասարանի և եթէ ի թիկունս օգնու-
թեան եկեսցնն Հոգևոր իշխանութիւնն և տեղա-
կան Հայկեան Ժողովուրդք՝ թէ յեկեղեցական
արդեանց և թէ յայլ հիմնական աղբերց. զորմէ
հանգամանօրէն առաջարկեալ է ի տնօրէնութիւն
Հոգևոր իշխանութեան:

Զայսմանէ Հոգարարձութիւն դպրոցաց խո-
նարհաբար խնդրէ ի Խմբագրութենէդ հրատարա-
կել յընդհանուր տեղեկութիւն Հայկեան Ժողո-
վորոց:

Հոգարարձուք Յովսէփ Աւագ Գ.հ.յ. Բունիաթեանց
Սիմէօն Պոպօվեանց
Գրիգոր Սողոմոնեանց:

Հ. 43.

Ի 28 Յունիս 1876 -ի.

ՍԱՊՐԱԽԱՆ.

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԴՌՆԵՐԸ ՓԱԿԵՄՔ.

Փորձի առաջին թուումն Պարսկաստան
վերնագրով երևցած յօդուածոյ հակա-
սական և կշիռոց պարունակութեանց մէջ
յօդուածագիրն տեղական ազգային վար-
չութեան՝ հոգևոր կառավարութեան՝
Վարդոցաց և այլոց վերայ ևս ճառարանե-
լով՝ կ'յաւելու ինչ ինչ արդիւնքներ և եր-
կու վանօրէից երևակայական եկամուտներ՝
որք իբրու թէ Ս. Էջմիածնի գանձարանը

կը մտնեն եղել, և բաւականին լաւ կերպեր,
սակայն աւելի լաւ չէր՝ որ պարունն նախ
իւր յօդուածը խոհեմութեամբ և ուշա-
գրութեամբ ինքնին քննադատէր և մշա-
կէր՝ և ապա Էջմիածնի գանձարանին
նուիրած արդիւնքները ևս ստուգէր՝
տնտղէր՝ և յակնէ յանուանէ յիշատա-
կէր, և այնպէս ի հանդէս գար, և եթէ
կարելի էր՝ թող ջանար մի տեղեկութիւն
ևս յաւելուլ՝ թէ որ տարին գէթ քան
կոպ. արդիւնք եկած է ի Ս. Էջմիածին, և
թէ յանուն Էջմիածնի հաւաքեալ ար-
դիւնքներն ո՛ւր կ'իրթան, Առաջնորդն ին-
չով կ'ապրի, տարեկան որքան ծախք ու-
նի և ուսկից կ'հոգայ, և ըստ այնմ ճառ-
մարանէր:

Իսկ եթէ յօդուածագիրն հոգածու-
թիւնը լով Վավրիժոյ ազգ. դպրոցին զը-
բամական մասին ապահովութեան համար
է, նոյն իսկ ինքն անձամբ օրինակ տալով՝
փոխանակ Զէլիչապէի կեանք վարելոյ՝ մի-
ջակ կենցաղավարութեամբ շատանայր և
տարեկան 2—300 ուրբիով բաւականա-
նայր, որով դժուար չէ Վավրիժոյ պէս քա-
ղաքում ապրել, թող լինի 400 ուրբի.
և այսպիսի խնայողական միջոցներով ևս
դպրոցը պահպանել կարելի էր և է, մինչ-
դեռ մասնաւոր մի տեղոյ համար՝ վնա-
սակար մի սկզբունք ընդունելով՝ այս ինքն
Էջմիածնի ի Վավրիժ ունեցած եկա-
մուտները Վավրիժոյ դպրոցին յատկա-
ցնելով, ի Տփլիս եղածը՝ Տփլիսայ դպրո-
ցոցաց, յԱղէքսանդրապօլ եղածը՝ Ա-
ղէքսանդրապօլոյ դպրոցաց, ի Վանձակ
եղածը՝ Վանձակու դպրոցաց յատկացը-
նելով՝ ո՛ւր կ'իրթայ Ս. Էջմիածնի Հայ-
րապետական Աթոռոյ վիճակը, և Ս. Էջ-

միածնի գոները փակեմք՝ որպէս զի մէ-
լեղաբէներու գաղափարները՝ նպատակ-
ները և միմայն անշնական նկարագրերը և
շահերը պատկուցին. իսկ թէ Ս. Էջմիած-
նի գոյուելով՝ Հայաստանեայց Եկե-
ղեցոյ և Ազգի վիճակը ինչ կլինի, կամ
թէ բաւական մեծ մաս կազմող Հայոց
գոյութիւնը՝ իւր կյանգի՝ կմտաբերեն
կամ կարող են հետաատեսել:

Աւր թողումք՝ որ այժմ Ս. Էջմիած-
նի՝ Գալբանոց և Ղեմարանէ բողկացեալ
մի նշանաւոր՝ մեծ և ծանր հաստատու-
թիւն ևս ունենալով՝ տարեկան որքան
մեծ ծախուց դուռն բացած ունի, զոր և
պարտաւորէ ապահովել ապագայ վտանգ-
ներէն ազատ պահելոյ համար՝ ինչպէս որ
ամեն ջանք ի գործ դրած այժմէն կջանայ
այս նպատակիս հասանել՝ կարելի եղած
խնայողական միջոցները ձեռք առնլով և
դրամազրուս կամ կալուածք յաւելաց-
նելով: Տակաւին չեմք յիշեր Էջմիածնի
այլ բազում կարօտութիւնքը, բնակա-
րանաց և շինուածոց անյարմարութիւնքը
և նորոգ կառուցանելիք ինչ ինչ շինուա-
ծոց անհրաժեշտութիւնք, նոյն իսկ Մայր
Տաճարիս վերանորոգութեան կարի կա-
րօտ վիճակը՝ որ հրբէք պատիւ չբերեր
Հայոց, բայց այս ամենը ահագին գու-
մարներու կրկարօտին և զարդիս ուստի
կարելի է ձարել, վասն որոյ լուծեան
տրուած է:

Եթէ ոչ այս ամենը՝ գէթ շատը Պարս-
կաստանէ յօդուածագիրն ևս պիտի զիտ-
նար՝ անձամբ ի Ս. Էջմիածնիս պատա-
հած լինելով, կամ թէ յայնժամ կա-
րող էր ըստ բաւականին նկատել և ստու-
գել. ինչ և իցէ: Մեք կյուսամք որ՝ յի-

շեալ պարօնն և նմանները սյուսհետե
կջանան այսպիսի անօգուտ խնդիրներ
յուզելէ, և չգիտեցած բաներուն վերայ
ևս լուծիլն պահել կսովորին:

Խ Թ Ա Ն

Պատասխանատուութիւնը արգոյ Գ.
Ն. եանցի վերայ թողլով՝ անկողմնա-
կալութեամբ կհրատարակեմք հետե-
ւեալը, յուսալով զի որոց անկէ՝ կփու-
թան նորա եւս կարեւոր բացատրու-
թիւնները տալ եւ կամ զգուշանալ:

ԵՐԵՅՓՈՒԽԱՆՈՒԹԻՒՆ՝ ԱՅՍ ԻՆՔՆ

ԳԱՆՁԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍԻ ԵԿԵՂԵՑԵԱՑ:

Մինչև 1795 թիւն Փրկչի չունիմք գրաւոր
ծանօթութիւն թէ Թիֆլիսի երկգիտականներն
ինչ իբաւումքնր են ունեցել իւրեանց տեսու-
թեան յանձնուած եկեղեցական կալուածոց, ըս-
պատից և կահ կարասեաց, արդեանց և ծախուց
վերայ, բայց այբքան և եթ յայտնի է՝ որ զկնի
վերոյիշեալ թուականին, այս ինքն զկնի Պար-
սից աւերելոյն զԹիֆլիս այն ինչ բնակիչներն
վերադարձած են, գտած են որպէս իւրեանց բնա-
կարանները, նոյնպէս եկեղեցիները կողոպտուած,
մին քանիսը կործանուած և այրուած ևս, վասն
որոյ այնուհետե հետեւել են վերանորոգել զա-
նոնք և եկեղեցիները պայծառացնել և նոցա միջի
նուիրական սպասներն և զարգերը հայթայթել:

Արդէս ինչ ինչ գրաւոր ծանօթութիւններէ
կերեաց և նոյն իսկ ժամանակակիցք բերանացի
կվկայէին թէ բնակիչներն իւրեանց այն խղճալի
վիճակուամն՝ ոչ այնքան նախանձաւոր և հեռա-
մուտ էին իւրեանց բնակարանների եւ տների
պակաս պատները չբացուցանել և օրական պա-
րենները ձեռք բերել, որքան իւրեանց սրբազան
աղօթատեղիքը վերանորոգել և պայծառացնել և
նոցա նուիրական սպասներն և զարգերը հայթ-